COMMITTEE OF MINISTERS
COMITÉ DES MINISTRES

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

MINISTERS' DEPUTIES
DÉLÉGUÉS DES MINISTRES

Resolutions
Résolutions

CM/Res(2020)2

22/01/2020

Resolution on the Council of Europe youth sector strategy 2030

Unofficial translation into Armenian

Résolution relative à la Stratégie du Conseil de l'Europe pour le secteur jeunesse à l'horizon 2030

Traduction non-officielle en arménien

Նախարարների կոմիտեի CM/Res(2020)2 բանաձևը Եվրոպայի խորհրդի երիտասարդական հատվածի 2030 թ. ռազմավարության մասին

© Council of Europe, original English and French versions

Text originated by, and used with the permission of, the Council of Europe. This unofficial translation is published by arrangement with the Council of Europe, but under the sole responsibility of the translator.

* * * * *

© Conseil de l'Europe, versions originales en anglais et français

Le texte original provient du Conseil de l'Europe et est utilisé avec l'accord de celui-ci. Cette traduction est réalisée avec l'autorisation du Conseil de l'Europe mais sous l'unique responsabilité du traducteur.

COMMITTEE OF MINISTERS
COMITÉ DES MINISTRES
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ՓՈԽՆԱԽԱՐԱՐՆԵՐ Բանաձևեր **CM/Res(2020)2** 22 հունվարի 2020 թ.

Նախարարների կոմիտեի CM/Res(2020)2 բանաձևը Եվրոպայի խորհրդի երիտասարդական հատվածի 2030 թ. ռազմավարության մասին

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2020 թվականի հունվարի 22-ին փոխնախարարների 1365-րդ հանդիպման ժամանակ)

Նախարարների կոմիտեն,

հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի պետությունների և կառավարությունների ղեկավարների՝ 2005 թվականի մայիսին Վարշավայում կայացած 3-րդ գագաթնաժողովում ընդունած հռչակագիրը և գործողությունների ծրագիրը, որտեղ, մասնավորապես, նշվում է, որ «Եվրոպայի խորհուրդը շարունակելու է զարգացնել իր ուրույն դիրքը երիտասարդական ոլորտում»,

հաշվի առնելով 2019 թվականի մայիսին Եվրոպայի խորհրդի 70-ամյակի կապակցությամբ Հելսինկիում կայացած իր 129-րդ նստաշրջանում Նախարարների կոմիտեի կողմից ընդունված հռչակագիրը, որտեղ, մասնավորապես, նշվում է, որ «ավելի քան երբևէ պահանջվում է եվրոպական միասնություն՝ դիմակայելու նոր մարտահրավերներին, որոնք սպառնում են մեր հասարակություններին։ Հույժ կարևոր է, որ Կազմակերպությունն արագ և արդյունավետ կերպով արձագանքի անդամ պետություններում ի հայտ եկող խնդիրներին (…) Այդ նպատակով մենք պարտավորվում ենք ամրապնդել Եվրոպայի խորհրդի ուրույն դերը՝ որպես համաեվրոպական համագործակցության արդյունավետ շրջանակ»,

հաշվի առնելով այդ նույն հռչակագիրը, որտեղ հեղինակները նաև ընդունում են «քաղաքացիական հասարակության առանցքային դերը» և պարտավորվում են «վարել կառուցողական և թափանցիկ երկխոսություն քաղաքացիական հասարակության հետ մեր ներգրավվածության բոլոր մակարդակներում»,

այդ տեսանկյունից կարևորելով Եվրոպայի խորհրդի համատեղ կառավարման համակարգը երիտասարդական ոլորտում՝ որպես մասնակցային ժողովրդավարության կենդանի օրինակ, որը միավորում է երիտասարդ եվրոպացիների և երիտասարդության խնդիրների համար պատասխանատու պետական մարմինների կարծիքները Երիտասարդության հարցերով միացյալ խորհրդում (ԵՄԽ/CMJ),

հաշվի առնելով Եվրոպական մշակութային կոնվենցիան և Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի շրջանակային կոնվենցիան,

հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի Երիտասարդության հարցերով պատասխանատու նախարարների 8-րդ խորհրդաժողովի հռչակագիրը, որն անվանում են «Եվրոպայի խորհրդի երիտասարդական քաղաքականության ապագան. Օրակարգ 2020», և որն ընդունվել է 2008 թվականի հոկտեմբերին Կիևում, և Եվրոպայի խորհրդի երիտասարդության քաղաքականության մասին CM/Res(2008)23 բանաձևը, որն ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2008 թվականի նոյեմբերի 25-ին,

մտապահելով «Օրակարգ 2020-ի» շրջանակներում ստացած ձեռքբերումները և սերտած դասերը,

հիշեցնելով երիտասարդական քաղաքականության ոլորտում Եվրոպայի խորհրդի հիմնական ձեռքբերումների պահպանման և ամրապնդման անհրաժեշտությունը, ներառյալ՝ Նախարարների կոմիտեի CM/Rec(2019)4 հանձնարարականն անդամ պետություններին չափահաս կյանքին անցման

փուլում գտնվող երիտասարդ փախստականներին աջակցելու մասին, Նախարարների կոմիտեի CM/Rec(2017)4 հանձնարարականն անդամ պետություններին երիտասարդական աշխատանքի մասին, Նախարարների կոմիտեի CM/Rec(2016)7 հանձնարարականն անդամ պետություններին երիտասարդների համար իրավունքների հասանելիության մասին, Նախարարների կոմիտեի CM/Rec(2015)3 հանձնարարականն անդամ պետություններին անբարենպաստ շրջաններից երիտասարդների համար սոցիալական իրավունքների հասանելիության մասին, Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)7 հանձնարարականն անդամ պետություններին Եվրոպայի խորհրդի՝ կրթություն հանուն ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների կրթության խարտիայի մասին, Նախարարների կոմիտեի Rec(2006)14 հանձնարարականն անդամ պետություններին քաղաքացիական գործընթացներում և հասարակական կյանքում երիտասարդության մասնակցության մասին, Նախարարների կոմիտեի Rec(2004)13 հանձնարարականն անդամ պետություններին տեղական և տարածքային կյանքում երիտասարդության մասնակցության մասին, Նախարարների կոմիտեի Rec(2003)8 հանձնարարականն անդամ պետություններին երիտասարդների ոչ ֆորմալ կրթության/ուսուցման խթանման և ճանաչման մասին, և Նախարարների կոմիտեի Decl(29/05/2019) հռչակագիրը «Ոչ ատելության խոսքին» երիտասարդական արշավի արդյունքների մասին,

հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի ռազմավարությունը երեխայի իրավունքների վերաբերյալ (2016-2021 թթ.), Եվրոպայի խորհրդի ռազմավարությունը գենդերային հավասարության ապահովման վերաբերյալ (2018-2023 թթ.), Եվրոպայի խորհրդի ռազմավարությունը հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ (2017-2023 թթ.), Ռոմա գնչուների և բնակչության քոչվոր խմբերի ինտեգրման հարցերով գործողությունների թեմատիկ ծրագիրը (2016-2019 թթ.), Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 1805 (2007) հանձնարարականն անձանց նկատմամբ իրենց կրոնի հիմքով աստվածանարգության, կրոնական վիրավորանքի և ատելության խոսքի մասին, Եվրոպայի խորհրդի աշխատանքն ինտերնետի կառավարման և արհեստական բանականության ոլորտում,

հաշվի առնելով Եվրոպական միության խորհրդի և անդամ պետությունների կառավարությունների ներկայացուցիչների բանաձևը, որն ընդունվել է «Երիտասարդական ոլորտում եվրոպական համագործակցության շրջանակը. Եվրոպական միության 2019-2027 թվականների Երիտասարդական ռազմավարությունը» հարցի շուրջ Խորհրդի գումարման արդյունքում, որտեղ, մասնավորապես, նշվում էր, որ «անհրաժեշտ է խրախուսել այս ոլորտում Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող աշխատանքի հետ հետագա փոխգործակցությունը»,

հաշվի առնելով Միավորված ազգերի կազմակերպության՝ 2015 թվականի սեպտեմբերի 25-ին Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված A/RES/70/1 բանաձևը «Վերափոխելով մեր աշխարհը. կայուն զարգացման 2030 օրակարգը» և Միավորված ազգերի կազմակերպության երիտասարդական ռազմավարությունը «Երիտասարդություն 2030. աշխատելով երիտասարդների հետ և երիտասարդների համար»,

ճանաչելով երիտասարդական ոլորտում բոլոր համապատասխան միջազգային շահագրգիռ կողմերի, մասնավորապես՝ Եվրոպական միության և Միավորված ազգերի կազմակերպության աշխատանքի հետ համաձայնեցվածության և փոխգործակցության ապահովման կարևորությունը,

հիշեցնելով, որ ցանկացած ժողովրդավարական հասարակության կայունությունը հիմնված է նրա երիտասարդների ստեղծագործականության, ակտիվության, սոցիալական հանձնառության և կարողունակությունների վրա,

վերահաստատելով Եվրոպայի խորհրդի երիտասարդական հատվածի ուրույն աշխարհագրական շրջանակն ու դերը և դրա գործիքները, ներառյալ՝ համակառավարվող համակարգը, Ստրասբուրգի և Բուդապեշտի եվրոպական երիտասարդական կենտրոնները, Եվրոպական երիտասարդական հիմնադրամը և Եվրոպական հանձնաժողովի հետ երիտասարդական ոլորտում գործընկերությունը՝ Եվրոպայում գործունեությանը և ժողովրդավարության ու մարդու իրավունքների արժեքների իրագործմանը երիտասարդներին մասնակից դարձնելու նպատակով,

հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի՝ երիտասարդների համար հետևողականորեն նպատակային ներդրումներ կատարելու անհրաժեշտությունը հնարավորությունների ստեղծմանն ուղղված մոտեցման միջոցով, մասնավորապես՝ աջակցելով անդամ պետություններին Եվրոպայի խորհրդի չափանիշներին համապատասխան երիտասարդական քաղաքականության մշակման հարցում,

հաշվի առնելով մշտական մարտահրավերները, որոնց բախվում են երիտասարդները թե՛ նրանց առաջարկվող հնարավորությունների բացակայության և թե՛ անկայունության մեծ ռիսկի առումով, բայցև այնուամենայնիվ, համոզված լինելով նրանց զգալի ներուժի, հետևաբար և հիմնարար դերի մեջ Եվրոպայի խորհրդի հիմնական արժեքների խթանման գործում,

ընդգծելով 1972 թվականից ի վեր Եվրոպայի խորհրդի երիտասարդական հատվածի առանձնահատուկ ներդրումը Կազմակերպության նպատակների իրագործման ուղղությամբ և նոր իրավիճակներին ու մարտահրավերներին պատշաճ արձագանքելու դրա կարողությունը, օրինակ, կլիմայի փոփոխության, արհեստական բանականության և ինտերնետի կառավարման ոլորտներում,

շեշտադրելով այս համատեքստում 2020-2030 թվականների համար ռազմավարական նոր շրջանակ մշակելու կարևորությունը,

ի գիտություն ընդունելով Եվրոպայի խորհրդի երիտասարդական հատվածի 2030 թ. ռազմավարության մասին տեղեկատվական փաստաթուղթը, որն ընդունվել է 2019 թվականի հոկտեմբերին Երիտասարդության հարցերով միացյալ խորհրդի կողմից,

1. Որոշում է, որ Եվրոպայի խորհրդի երիտասարդական հատվածը պետք է նպատակ հետապնդի հնարավորություն ընձեռել երիտասարդներին ամբողջ Եվրոպայում ակտիվորեն պահպանել, պաշտպանել և խթանել Եվրոպայի խորհրդի հիմնական արժեքները՝ մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և օրենքի գերակայությունը, և օգուտ քաղել դրանցից, մասնավորապես՝

- ընդլայնելով երիտասարդների համար իրավունքների հասանելիությունը, որպեսզի երիտասարդները և քաղաքացիական հասարակության բոլոր երիտասարդական կառույցները կարողանան իրենց մարդու իրավունքների և ազատությունների լիարժեք իրացման համար ապավինել նպաստավոր միջավայրին, ներառյալ՝ որոշակի քաղաքականությանը, մեխանիզմներին և ռեսուրսներին,

- խորացնելով երիտասարդների գիտելիքները, որպեսզի գործնական համայնքներն իրենց ստեղծած գիտելիքով և փորձով աջակցեն երիտասարդների ժողովրդավարական ներգրավվածությանը,

- ընդլայնելով երիտասարդության մասնակցության շրջանակը, որպեսզի երիտասարդները սոցիալական և քաղաքական լայն համաձայնության հիման վրա նշանակալի մասնակցություն ունենան որոշումների կայացմանը բոլոր մակարդակներում՝ ի աջակցություն մասնակցային կառավարման և հաշվետվողականության,

2. Որոշում է, որ հետևյալ հարցերը պետք է դիտարկվեն որպես Եվրոպայի խորհրդի երիտասարդական հատվածի 2030 թ. ռազմավարության թեմատիկ առաջնահերթություններ և հիմք ծառայեն նրա աշխատանքի համար մինչև 2030 թվականը՝

ա. Բազմակարծ ժողովրդավարության վերակենդանացում՝ հատուկ ուշադրություն դարձնելով հետևյալին՝

- մասնակցային ժողովրդավարության և ժողովրդավարական քաղաքացիության զարգացման գործում երիտասարդական քաղաքացիական հասարակության կարողությունների ընդլայնում իրենց անդամակցության շրջանակներում և դրանցից դուրս,

- քաղաքական և կառավարման ավելի մեծ թվով գործընթացների բովանդակային և մասնակցային ձևով իրականացում՝ ներգրավելով երիտասարդների բազմազան խմբերի և նրանց ներկայացուցիչների/կազմակերպությունների,

- երիտասարդության մասնակցության համար խոչընդոտների վերացման ուղղությամբ երիտասարդական քաղաքականության և երիտասարդական աշխատանքի ամրապնդում,

- ժողովրդավարության ոլորտում այնպիսի նոր միտումներին արձագանքման ինստիտուցիոնալ միջոցների բարելավում, ինչպիսիք են երիտասարդության մասնակցության ձևերի փոփոխությունը, թվայնացումը կամ ինտերնետի կառավարումը,

բ. Երիտասարդների համար իրավունքների հասանելիությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով հետևյալին՝

- երիտասարդների համար իրավունքների հասանելիության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի չափանիշների իրականացման ոլորտում առաջընթացի խթանում,

- երիտասարդական կազմակերպությունների և այլ համապատասխան շահագրգիռ կողմերի համար կարողությունների զարգացման և ռեսուրսների ավելացում՝ մարդու իրավունքների ոլորտում կրթություն ապահովելու և իրավունքների հասանելիությանը նպաստելու նպատակով,

- ի հայտ եկող այնպիսի խնդիրներին արձագանքման ինստիտուցիոնալ միջոցների բարելավում, որոնք ազդում են երիտասարդների իրավունքների և չափահաս կյանքի անցման վրա, ինչպիսիք են՝ կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի վատթարացման հետևանքները, արհեստական բանականությունը, թվային տարածքը, շարժունության մեծացումը և զբաղվածության նոր ձևերը,

գ. Խաղաղ և ներառական հասարակություններում համակեցությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով հետևյալին՝

- շահագրգիռ կողմերին ավելի լայն հնարավորությունների տրամադրում՝ ինչպես բազմազանությունը հաշվի առնող քաղաքականության, ծրագրերի և նախագծերի միջոցով ներառական հասարակությունների կառուցման, այնպես էլ խտրականության, բռնության և բացառման արդյունավետ մշտադիտարկման և հակազդեցության հետ կապված մարտահրավերները հաղթահարելու համար,

- երիտասարդներին հնարավորության ընձեռում, այդ թվում՝ նրանց, ովքեր ենթարկվում են խտրականության կամ բացառման որևէ ձևի, օգտվելու այնպիսի հնարավորություններից, որոնք ընդլայնում են նրանց հանձնառությունը ժողովրդավարական քաղաքացիությանը և դրա իրականացմանը,

- առանցքային հիմքերի ներառում, ինչպիսիք են եվրոպական միասնությունը, գլոբալ համերաշխությունը, խաղաղությունը, բազմազանությունը, միջմշակութային և միջսերնդային երկխոսությունը և էկոլոգիական կայունությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով քաղաքականությանը, փորձին և հետազոտություններին երիտասարդական հատվածում և նրա սահմաններից դուրս,

- երիտասարդների կարողությունների, հաստատությունների և առաջնորդության ամրապնդումը՝ բռնության կանխարգելման, կոնֆլիկտային իրավիճակների կարգավորման և խաղաղության մշակույթի կառուցման նպատակով, ֆինանսավորման զգալի աջակցության, ցանցերի ստեղծման և երիտասարդների ամբողջ բազմազանության և ինքնակազմակերպման նրանց տարբեր ձևերի ճանաչման միջոցով,

դ. Երիտասարդական աշխատանքը՝ հատուկ ուշադրություն դարձնելով հետևյալին՝

- երիտասարդական աշխատանքի քաղաքականության և փորձի ամրապնդում, ճանաչում և խթանում՝ ներառելով երիտասարդական աշխատանքը երիտասարդական քաղաքականության շրջանակներում, մասնավորապես՝ երիտասարդական աշխատանքի եվրոպական օրակարգի և դրա իրականացման միջոցով՝ Եվրոպական միության հետ սերտ համագործակցությամբ,

- ինչպես կամավորների, այնպես էլ վճարվող երիտասարդ աշխատողների կողմից իրականացվող երիտասարդական աշխատանքի որակի բարելավում,

- երիտասարդական աշխատանքի և ոչ ֆորմալ կրթության/ուսուցման հասանելիության և գրավչության ընդլայնում՝ ի շահ երիտասարդների ավելի լայն զանգվածների,

3. Որոշում է, որ վերոնշյալ առաջնահերթությունների հիմքում պետք է ընկած լինեն հետևյալ սկզբունքները, որոնց միջոցով Եվրոպայի խորհուրդը փոխգործակցում է երիտասարդների հետ՝ փոխադարձ հարգանք և վստահություն, ներառականություն, կայուն հանձնառություն, մասնակցություն, արդարություն, թափանցիկություն և գործակցություն,

4. Որոշում է, որ վերոնշյալ առաջնահերթությունները պետք է իրականացվեն հետևյալ միջոցներով՝

- միջկառավարական համագործակցություն համաեվրոպական մակարդակում՝ Եվրոպայի խորհրդի չափանիշների վրա հիմնված երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման ուղղությամբ,

- աջակցություն անդամ պետություններում երիտասարդական քաղաքականության մշակմանը երկկողմանի և բազմակողմանի աջակցության միջոցներով,

- երիտասարդ գործակիցների (երիտասարդ առաջնորդների և երիտասարդական աշխատողների) կարողությունների զարգացում, մասնավորապես՝ Եվրոպական երիտասարդական կենտրոնների և դրանց կրթական ու վերապատրաստման ծրագրերի միջոցով,

- լավ կառավարում և երիտասարդական մասնակցություն, մասնավորապես՝ համակառավարման համակարգի միջոցով, որը համախմբում է երիտասարդներին և կառավարության ներկայացուցիչներին այնպիսի որոշումներ կայացնելու նպատակով, որոնք պետք է հանդիսանան երիտասարդության ոլորտում համաեվրոպական համաձայնության, լեգիտիմության և բազմակողմանի պատասխանատվության զարգացման համար հիմնական հարթակ, ինչպես նաև քաղաքական և միջինստիտուցիոնալ համագործակցության համար տարածք,

- ֆինանսական աջակցություն երիտասարդական քաղաքացիական հասարակության զարգացմանը, մասնավորապես՝ Եվրոպական երիտասարդական հիմնադրամի միջոցով,

- նորարարություններ երիտասարդական աշխատանքում, երիտասարդական քաղաքականություն և երիտասարդական հարցերով հետազոտություններ,

- երիտասարդական ոլորտում քաղաքականություն մշակողների, քաղաքական գործիչների և հետազոտողների միջև համագործակցություն,

- որակի զարգացում և չափանիշների սահմանում երիտասարդական քաղաքականության ոլորտում,

- համագործակցություն Եվրոպական միության հետ և գործընկերություն այլ շահագրգիռ կողմերի և ծառայությունների հետ, որոնք ներգրավված են Եվրոպայի խորհրդի երիտասարդական հատվածին առնչվող ոլորտներում,

- Եվրոպայի խորհրդի շրջանակներում երիտասարդների հետաքրքրությունների ներառում (մեյնսթրիմինգ) և միջգերատեսչական համագործակցություն,

- պրոակտիվ աշխատանք անբարենպաստ վիճակում գտնվող երիտասարդների հետ և նրանց ներգրավում,

- ապագա միտումների, մարտահրավերների և հնարավորությունների կանխատեսում,

5. Որոշում է, որ սույն ռազմավարությունը պետք է իրագործվի Եվրոպայի խորհրդի երիտասարդական հատվածի հետևյալ գործիքների միջոցով, որոնք փոխկապված են և փոխկախված՝

- Եվրոպայի խորհրդի երիտասարդական հատվածի համապատասխան համակառավարվող մարմինները, որոնք պետք է մշակեն գործողությունների ծրագրեր սույն բանաձևի հիման վրա, և

անհրաժեշտության դեպքում Նախարարների կոմիտեին ներկայացնեն առաջարկություններ չափանիշների վերաբերյալ,

- Եվրոպական երիտասարդական կենտրոնները և Եվրոպական երիտասարդական հիմնադրամը, որոնք պետք է շարունակեն աջակցել Եվրոպայի խորհրդի հիմնական արժեքների վրա հիմնված եվրոպական երիտասարդական համագործակցության զարգացման և ամրապնդման գործում իրենց դերակատարմանը,

- երիտասարդական ոլորտում Եվրոպական հանձնաժողովի հետ գործընկերությունը, որին անհրաժեշտ է շարունակել աջակցել՝ որպես երկու գործընկերների միջև լավ համագործակցության օրինակ,

6. Որոշում է, որ սույն ռազմավարությունը պետք է կյանքի կոչվի և պարբերաբար գնահատվի Եվրոպայի խորհրդի հաջորդական ծրագրերի և բյուջեների միջոցով մինչև 2030 թվականը, և որ Երիտասարդության հարցերով միացյալ խորհուրդը (ԵՄԽ/CMJ) պետք է համապատասխանաբար գնահատի դրա իրագործումը։